

ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՍԱՑՈՂՆԵՐԸ

ՌՈՋԱ ԴՐԻԳՈՐՅԱՆ

Ավելի քան մեկ տասնամյակ Սևանի ավազանի հայ բնակչության տարբեր ազգագրական խմբերում բանահավաքչական աշխատանքների ընթացքում մենք հայտնաբերեցինք և գրառեցինք «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի յոթ պատում: Նորօրյա այս գրառումները եկան հավաստելու, որ վեպը իրապես քիչ է պատմվում և զգալիորեն նոսրացել են վիպասացների բանասացների շարքերը. մինչդեռ հայտնի է բանահյուսական նյութերի պահպանման գործում բանասացների բացառիկ դերը:

Հայ բանագիտության պատմությանը հայտնի են բազմաթիվ նշանավոր բանասացների անուններ, որոնց շնորհիվ կորստից փրկվել և սերունդներին են փոխանցվել բանահյուսական մեծարժեք նյութեր, որոնք կրում են վարպետ ասացողի բնատուր ձևեր, տոհմիկ ավանդույթի, պատմական տվյալ ժամանակահատվածի կնիքը: Անցյալ դարի 70-ական թվականներից ի վեր զանգվածային հետաքրքրությունը ժողովրդագիտական նյութերի, մասնավորապես ժողովրդական վեպի նկատմամբ, սրեց բանահավաքների (Գ. Սրվանձտյանց, Մ. Աբեղյան, Ս. Հայկունի և այլն) ուշադրությունը բանասացների, հատկապես վիպասացների, իբրև վեպը պահպանողների և ավանդույթների հանդեպ, հանգամանք, որ հետագայում առավել խորացավ հայ բանահավաքչության զարգացմանը զուգընթաց: Այս առումով գիտական հետաքրքրությունից զուրկ չէ «Սասնա ծռեր» վեպի մեր գրառած պատումների¹ վիպասացների սոցիալ-աղագրական և հոգեբանական որոշ հատկանիշների ծանուցումը, որը մեր կարծիքով, կարող է որոշակի պարզաբանումներ բերել վեպի պահպանման ու ավանդման մեթոդային իրողությանը²:

Ինչպես հայտնի է, Սևանի ավազանի հայ ազգաբնակչության զգալի մասը 1828 թ. ուլու-թուրքական պատերազմի հետևանքով Արևմտյան Հայաստանի այլևայլ տեղավայրերից և Պարսկաստանի հայաբնակ գավառներից տեղահանված և Արևելյան Հայաստանում վերաբնակեցված հայության շառավիղներն են: Վեպի մեր գրառած պատումների ասացողները սերում են Ալաշկերտ, Մուշ, Դիադին ազգագրական շրջաններից, մեծ մասամբ, 70—80 տարին բոլորած, անգրագետ, հողագործ գյուղացիներ են, տղամարդկանց գերակշռությամբ, հատկանիշներ որոնք բնորոշ են Գեղարքունիքի հայ բանասացների ստվար մեծամասնությանն առհասարակ: Բայց այն էականը, որով վիպասացն առանձնանում է մյուս բանասացներից, ամենից առաջ նրա սերումն է տոհմիկ ասացողների գերդաստանից: Վիպասացները պատահական մարդիկ չեն, այլ վիպասաց նախնիների մեկ-երկու սերունդ անցկացրած ընտանիքի շառավիղներ:

Գեղարքունիքի յոթ վիպասացներից միայն մեկն էր, որ վեպը լսել էր համալուրջից և հիշողությամբ վերարտադրեց այն, մնացածները՝ լսել և սովորել էին ընտանիքներում: Վիպասաց Բարսեղ (Բասո) Բարսեղյանը Վարդենիսի շրջանում երևելի բանասացի համբավ էր վայելում, գիտեր բազմաթիվ հեքիաթներ, օժտված էր գեղեցիկ ձայնով, տոհմիկ բանասացի էպիկական հանդարտությամբ, մեծ խանդավառությամբ էր հիշում, որ «... իմ պապ շատ կպատմեր ծռերու պատմութեն, վիճից էր լսե, սովրե՝ չեմ կանա ասեմ, հմա

¹ Հոգվածը գրվել է 1974—1985 թթ. բանահյուսական հավաքչական աշխատանքի արդյունքների հիման վրա:

² Հայ բանագիտության մեջ տարբեր ժամանակներում այս հարցերին անդրադարձել են Մ. Աբեղյանը, Գր. Գրիգորյանը, Ս. Հարությունյանը և այլն:

գեղ կթափեր մեր հողեն, որ էնի կպատմեր, ես մենակ էնորից եմ լսած ու սովորած էդ պատմութեններն³։ Մարտունու շրջանում 82-ամյա Տոլուիան Աղլխանյանը, Հայկաղ Մկրտչյանը ևս վկայում էին, որ «Սասնա ծռերի» պատմությունը լսել են կամ պապից կամ հարազատներից, իսկ նրանց համագլուղացի Հովհաննես Վրթոյանը, որը գեղեցիկ և շնորհքով պատմելու համար շրջանում հռչակված էր «վարպետ դանդաղ» մականվամբ, ասում էր. «...լսել և սովորել եմ իմ շոշերուց, պապուս ձեն աշխարհ կրոնի, օր կպատմեր, կըսին՝ էնի հլա Բաթնոս հելած ժամանակ էլ կպատմեր Սասնա Դավթի խեբյաթ»⁴։ Վիպասացների այս վկայություններից արդեն երևում է, որ վիպագիտականցումը կատարվել է հարազատ ընտանիքի միջավայրում, ուստի և իրենք ոչ թե պատահական ասացողներ են, այլ անդրաժին վիպասացների սերունդներ։ Վեպն իմացող ամեն բանասաց չէր, որ համաձայնվում էր վեպ պատմել, նրանցից ոմանք նույնիսկ կտրականապես մերժում էին նշելով՝ համագլուղացի այն վիպասացներին, որոնք իրենց պապերից լսել և հմտացել էին վեպը պատմելու մեջ։ Այնպիսի վարպետ բանասաց, ինչպիսին Մարտունու շրջանի բնակիչ 95-ամյա Կույր բանասաց Գեղամ Ավետիսյանն էր, որի սիրահոժար կամքով 65 հեքիաթ գրանցեցինք, հրաժարվում էր վեպը պատմելուց, պատճառաբանելով, թե՝ «էդի ես չեմ պատմե, էդի թի Հայկաղ պատմա, ես էնորից եմ լսած ու սովորած, էնի լե հուր պապից, թի էնի ասա...»⁵։ Երկար համոզելուց հետո միայն նա համաձայնեց, այն էլ որոշակի վեհերոտությամբ, պատմել վեպը, կարծես, ուրիշի ունեցվածքն էր սեփականացնում։

Վեպը, դառնալով այս կամ այն վիպասաց ընտանիքի մեծաշնորհը, ավանդույթի ուժով պահպանում է այդ առաջնությունը և անգամ նրանցից լսած, սովորած բանասացը մտավախորեն չի խախտում այդ ավանդական կարգը։ Այնպես, որ վեպի հարատևման ազդակներից մեկն էլ պետք է համարել վիպասաց սերունդների ավանդական ներքին կապը, որի յուրաքանչյուր թուլացում իր հետ բերում է վեպի լիարժեք ավանդման թուլացում, վիպասացության կենդանի ավանդների անկում։ Վիպագիտականցումը արդյունավետ է և հարազատորեն է կատարվում տոհմիկ վիպասացների ընտանիքի շրջանակներում։ Ավելի տպավորիչ ու մնայուն են սեփական հարկի տակ, մանկության օրերին և ընդհանրապես մեծահասակ հարազատներից լսած պատմություններն ու հեքիաթները, որոնք ուղեկցում են ընտանիքի անդամներին իրենց ողջ կյանքում։ Ինչ խոսք, կենդանի ավանդումը ասացողից ասացող, սերնդե սերունդ իր կնիքն է դնում պատմվող նյութի վրա, յուրաքանչյուր վիպասաց անհատականության իր երանգն է հաղորդում վեպին, և ամեն վիպասացի պատմումի հետ վեպը իրապես ծնվում է նորովի։ Բայց որքան հաստատուն ու դիմադրունակ է ավանդության գործընթացը, այնքան կայուն են մնում վեպի հիմնական մոտիվները, կերպարները, աշխարհագրական միջավայրն ու լեզվամտածողությունը։

Համաշխարհային վիպագիտության մեջ ևս վիպագիտականցման, վիպապահպանման հարցում որոշակի դեր են կատարել վիպասացները, անդ-ապաստոգները. այսպես, հին Հունաստանում հոմերիկոսների ընկերությունը Քրոս կղզում կազմված է եղել Հոմերոսի պոեմներին քաջատեղյակ և շնորհաշատ կատարողներից ու տարածողներից, որոնք փայլել են իրենց «քնատուր աստվածային» շնորհքով և ըստ ավանդության համարվել են հին աշխարհի «Կույր երգիչ» ռապսոդ Հոմերոսի ազգակից-սերնդակիցները⁶։ Նրանք պատմել և երգել են Հոմերոսի ստեղծագործությունները և նպաստել նրանց տարածմանն ու սերնդից սերունդ փոխանցմանը։

³ ԿԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռեզա Գրիգորյանի ֆոնդ, «Սևանի ավազանի բանահյուսությունը» ձեռագիր ժողովածու (այսուհետև՝ ՀԺՐԱԳ «Սևանի ավազանի բանահյուսությունը» ձեռ. ժող.)։

⁴ Ռոդա Գրիգորյան, Գեղարքունիք («Հայ ազգագրություն և բանահյուսություն», № 14, Երևան, 1983, էջ 253)։

⁵ ՀԺՐԱԳ, «Սևանի ավազանի բանահյուսությունը» ձեռ. ժող.։

⁶ Платон, Сочинения, т. I, М., 1968, (6)։

Քանի որ վիպասացի նյութը էպիկական մեծ կտավն է, նա շատ չի ծավալվում, չի դիմում իմպրովիզացիայի գայթակղությանը, անգամ այն ժամանակ, երբ նա հստակ չի հիշում վիպական մանրամասները կամ ամբողջական հատվածներ։ Նման դեպքերում վիպասացը խոստովանում է իր մոռացումը, կամ էլ առհասարակ հրաժարվում է պատմելուց։ Նա հույսը իր կատարողական ձիրքի ու երևակայության վրա չի դնում, ինչպես դիցուք, երգասաց կատարողը, որն իր փայլուն ընդունակության շնորհիվ ազատ ծավալվում է արդեն հայտնի երգային ավանդության սահմաններում։

Վիպասացի համար թանկ է նախորդ վարպետ ասացողների նյութը, որին վերաբերվում է հարգանքով, ակնածանքով ձգտում է կիրառել նրանց փորձը և հաճախ էլ ընդօրինակում նրանց պատմելաոճն ու դիմախաղը։ «...Հավկազ հմլա կրողեր ու կանիծեր էտա շուն տաճիկին, օր տղին թալեց խոր, գելներ, ձեռներ կպարզեր, աստված կկանչեր, օր խորուց շուտ խանա դուս թառլան Դավթին»⁷։— պատմում էր վիպասաց Գեղամ Ավետիսյանը և ինչպես նկատվեց պատմմի ժամանակ, նա, գրեթե, իր նկարագրածի օրինակով էր պատմում նյութը, հատկապես այն պահերին, երբ ունկնդիրները հավաքվում էին և լսալանի չափագրի ընդարձակվում էր։ Վիպասացի համար կարևոր նախապայման է նաև ունկնդիրների միջավայրը։ Նա ապրում է իր պատմածով, խոր հավատով տոգորված ձգտում է տեղ հասցնել իր պատմածը։ Եթե հեթաթի հրաշապատում հատվածներին նա վերաբերվում է թերահավատորեն, պատևհ առիթ չկորցնելով իր վերաբերմունքն արտահայտելու։ «...Իր խեթթի բան ա էլի...», «...դը խեթթի ճիժ ա, շուտ կջոնա» և նմանատիպ երկբայական բանաձևումներով ձգտում է մեղմել հեթաթային չափազանցումները, ապա վիպահաղորդման ժամանակ նման երկբայական արտահայտությունների գրեթե չենք հանդիպում։ Նա ոչ միայն ինքն է հավատում իր պատմածին, այլ այդ հավատը ուզում է տեսնել ունկնդիրների աչքերում, այն փոխանցել լսարանին։ Ընդհանուր հավատամքով էին առաջնորդվում հին Հունաստանի անդ-ռապսոդները, հոմերիկները։ «Երբ պատմում եմ որևէ տխրաթախիժ պատմություն,— ասում է հին հունական ռապսոդ Իոնը։— Իմ աչքերը լի են արտասուքով, իսկ երբ սարսափելի ու ահարկու՝ մաղերս ցից են կանգնում, իսկ սիրտս խփում է արագ՝ վախից ու սարսափից...»⁸։

Վիպասացի խոր հավատը իր վիպածի նկատմամբ շերմացնում է լսարանը, փոխըմբռնման մթնոլորտ ստեղծում, իսկ պատմած նյութը տպավորվում ու լիովին ընկալվում է ունկնդիրների կողմից իբրև իրական դեպք, իբրև անցյալի եղելություն։ Ողիսևսի դեգերումները երգող երգիչ-ռապսոդ Դեմոդոկը Ալքինոյ թագավորի պալատում այնպես է ներկայացնում հերոսի տառապանքները, որ ռեդուրը հուզվում են և անգամ, Ողիսևսն է հեկեկում, նա այնպես էր երգում կարծես ինքն է եղել ականատեսն այդ դեպքերին⁹։ Լսարանն էլ իր հերթին դառնում է վիպապահպանման անհրաժեշտ նախապայման։ Վեպին քաջատեղյակ, վեպը բազում անգամներ լսած մարդկանց միջավայրը ավելի է կազմակերպում և խոսքի պատմմի նկատմամբ պատասխանատվությամբ զինում վիպասացին։ Ուստի, վիպապահպանման կարևոր առարկայական նախապայմաններ են վեպի կենդանի ավանդումը տոհմիկ վիպասաց ընտանիքներում, ունկնդիրների միջավայրը, մյուս կողմից՝ վիպասացի սուր հիշողությունն ու հավատը իր պատմմի նկատմամբ։

Վիպահավաքման փորձն ու պատմությունը ցույց է տվել, որ վեպի պատմմանը, հետևաբար և վիպասացիներին կարելի է խմբավորել ըստ ազգագրական շրջանների, մի բաժանում, որը, անշուշտ, չի ենթադրում նրանց խիստ մեկուսացում։ Միշրջանային շփումն ու փոխանցումը մշտապես առկա են ազգագրական տարբեր շրջանների միջև։ Այս երևույթը հատկապես ակնառու էր Գեղարքունիքի վիպասացիների շրջապատում, ուր հաճախ էին հավաքվում ազ-

⁷ ՀԺՅՈՒՄ, «Սևանի ավազանի բանահյուսությունը» ձեռ. ժող.։

⁸ Πλάτων, Եղվ. աշխ., (140).

⁹ Հոմերոս, Ողիսական, Երևան, 1958, էջ 113։

զագրական տարբեր խմբավորումների պատկանող վիպասացներ և այդպիսի միջավայրում վիպահաղորդումը դառնում էր առավել լայն ու ընդգրկուն, երբ ավազակերացի, մշեցի, դիադինցի վիպասացները միմյանց լրացնելով նպաստում էին տարբեր ազգագրական շրջաններում պատմվող վեպի պատումների շփմանն ու փոխանցմանը։ Սա կենդանի փոխներթափանցման մի պրոցես է, որը գալիս է հավաստելու մի կողմից վեպի անկման ու քայքայման տխուր փաստը, և ապա այդ նույն վեպը մոռացումից փրկելու ձիգերը։

Գեղարքունիքի վիպասացների միջավայրում կատարած մեր դիտարկումները թույլ են տալիս ասելու, որ «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի մոռացման ներկա փուլում Գեղարքունիքի տարածքում տակավին պատմվում է այն, և որ մեր գրառած պատումների վիպասացները պատահական բանասացներ չեն, նրանք սերում են վաղեմի վիպասաց ընտանիքներից, օժտված են լավ հիշողությամբ, վիպելու ձիրքով ու վարպետությամբ, իրենց հաղորդած նյութի նկատմամբ ունեն մեծ հավատ։ Վիպափոխանցումը նույն հարկի տակ, սերնդ-սերունդ կատարվում է սիրով ու ավանդապահորեն։ Վեպի ներխմբային (ազգագրական տարբեր խմբերում) փոխներթափանցումը Գեղարքունիքում, պետք է դիտվի իբրև վիպահաղորդման ու վիպապահպանման դրական ազդակ, իբրև վեպը իսպառ մոռացումից փրկելու վիպասացների վերջին ջանքերից մեկը։

ГЕГАРКУНИКСКИЕ СКАЗИТЕЛИ НАРОДНОГО ЭПОСА

РОЗА ГРИГОРЯН

Резюме

В населенных пунктах Севанского бассейна было записано 7 вариантов народного эпоса «Сасна црер». Сказители этих вариантов являются потомками переселенцев из разных этнографических регионов исторической Армении, поэтому эти варианты своими корнями восходят к далекому прошлому и охватывают несколько этнорегионов Западной Армении. Взаимосвязь между сказителями разных этногрупп Севанского бассейна следует считать положительным импульсом в деле сохранения народного эпоса «Сасна црер».